# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
## ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ–17/1 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ

05 դեկտեմբերի 2017թ.
ժամը 10:00

ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/2/ 1

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝** Լևոն Քալանթարյան

**Հանձնաժողովի անդամներ՝** Տելեմակ Քալաշյան
Եսայի Խուրլարյան
Մարինե Վահրամյան
Ռաֆայել Սիմոնյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** Օֆելյա Մանվելյան

**Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման վերաբերյալ**

1. ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ–17/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված: Հանձնաժողովը ուսումնասիրեց «Էքսկլյուզիվ Սերվիս » ՍՊԸ-ի ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից ստացված եզրակացությունը,ըստ որի «Էքսկլյուզիվ Սերվիս » ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչպես նաև հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները

Որոշվեց

✓ ՀՀ–ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Էքսկլյուզիվ Սերվիս » ՍՊԸ-ին: Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման տեքստը և ընտրված մասնակցին օրենքով սահմանված կարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Կողմ -5, դեմ-0

Լևոն Քալանթարյան ________ Հանձնաժողովի նախագահ

Տելեմակ Քալաշյան ________ Հանձնաժողովի անդամ

Եսայի Խուրլարյան ________ Հանձնաժողովի անդամ

Մարինե Վահրամյան ________ Հանձնաժողովի անդամ

Ռաֆայել Սիմոնյան ________ Հանձնաժողովի անդամ

Օֆելյա Մանվելյան ________ Հանձնաժողովի քարտուղար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» նոյեմբերի 2017 թվականի N 04-Ա

## «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան՝ Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Հիմնադրել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ:
2. Ստեփանավան համայնքի ղեկավարին՝ հիմնարկը հաշվառելու նպատակով մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

Համայնքի ավագանիներ.

| Հ/Հ | Ազգանուն, անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ասրյան Գոռ | | | | |
| 2 | Գրիգորյան Արմեն | | | | |
| 3 | Թունյան Տիգրան | | | | |
| 4 | Խանբեկյան Գևորգ | | | | |
| 5 | Հարությունյան Արսեն | | | | |
| 6 | Ճավրուշյան Դավիթ | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Մարտիրոսյան Հմայակ | | | | |
| 8 | Չերքեզյան Մանվել | | | | |
| 9 | Պապյան Արման | | | | |
| 10 | Ռնազյան Խալաթ | | | | բացակա |
| 11 | Սահրադյան Էդգար | | | | |
| 12 | Սուքիասյան Արթուր | | | | |
| 13 | Սուքիասյան Հրաչյա | | | | |
| 14 | Տոնոյան Անդրանիկ | | | | |
| 15 | Քալանթարյան Աշոտ | | | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

1901 ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան 1

(374-256) - 22-233
ֆաքս - 22-233


N<u>o</u> 025 «05» դեկտեմբերի 2017թ.

Հարգելի գործընկերներ,

Համայնքների խոշորացման արդյունքում «Ստեփանավանի քաղաքապետարանի աշխատակազմ» հիմնարկի, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ուրասարի համայնքապետարանի աշխատակազմ», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաղբյուրի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունը դադարեցվել է և հիմնադրվել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ:

Հին վավերապայմանները (ՀՎՀՀ և այլն) չեն գործում:

Ուստի անհրաժեշտ է հաշիվներ ներկայացնել նոր վավերապայմաններով:

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ, հասցե՝ Ստեփանավան համայնք, Սոս Սարգսյան թիվ 1, ՀՎՀՀ՝ 06954104:

Բանկային հաշվեհամարները անփոփոխ են:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ